ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 145

ք. Երևան 12 .10.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 02280455, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մայիսի 9 30/2) միջև 04.06.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-9/4-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 1 474 937,44 ՀՀ դրամի քիմիական և լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ), որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան Ընկերության կողմից ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ